

Արդարադատության արդյունավետ իրականացման միջազգային սկզբունքները

ԶՈՐԶԻՈ ՄԱԼԻՆՎԵՐՆԻ
Ժնևի համալսարան, Շվեյցարիա,
Վենետիկի հանձնաժողով

Ստացված է 03.04.2015

Ընդունված է 17.05.2016

Դատական համակարգի ձևավորումը և կայացումը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների ամենաբարդ և առանցքային խնդիրներից մեկն է: Այն վերջին մակարդակն է, որտեղ կարող են վիճարկվել պետական մարմինների որոշումները՝ ապահովելով մարդկանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և պետական մարմինների նկատմամբ վստահությունը: Արդարադատության արդյունավետ իրականացման հիմքը դատական համակարգի գործունեության հիմնական սկզբունքների՝ դատավորների անկախության, անկողմնակալության, անհրաժեշտ վարձատրության ապահովումն է: Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների դեպքում դրա հիմնական խոչընդոտներն են այլ սկզբունքների վրա հիմնված դատական համակարգի ժառանգությունը, համապատասխան մշակույթի և ավանդույթների բացակայությունը:

Բանալի բառեր

Արդարադատություն, դատական համակարգ, դատավորների անկախություն, անփոփոխելիություն, անկողմնակալություն, վարձատրություն:

Փաստաթղթային հիմքը

Եվրոպական մակարդակում արդարադատության արդյունավետ իրականացման վերաբերյալ առավել կարևոր փաստաթղթերն, անկասկած, ընդունել է Եվրոպայի խորհուրդը (ԵԽ): Ըստ ԵԽ-ի կանոնադրության, նման իրավասություն ունեն այդ կազմակերպության մի քանի մարմիններ, որոնց համար դա թերևս առավել կարևոր գործառնություններից է:

Առանձնահատուկ նշանակություն ունի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածը, որը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի մեծ թվով կիրառությունների պատճառ դարձած այդ դրույթն անհա-

վանական ազդեցություն է ունեցել արդարադատության իրականացման վրա ԵՄ-ի բոլոր քառասունյոթ անդամ երկրներում:

Իրավաբանորեն պարտադիր այդ դրույթից գատ հարկ է անդրադառնալ նաև մի շարք այլ փաստաթղթերի: Նույնիսկ եթե վերջիններս այսպես կոչված *փափուկ օրենքի* փաստաթղթեր են, այդուհանդերձ ունեն գգալի ազդեցություն արդարադատության արդյունավետ իրականացման վրա, և ՄԻԵԴ-ը չի երկմտում դրանք մեջբերել իր վճիռներում: Առավել հատկանշական են.

- Նախարարների կոմիտեի թիվ 12 հանձնարարականը արդարադատության անկախության վերաբերյալ (նոյեմբերի 17, 2010թ.),
- Եվրոպական դատավորների խորհրդատավական խորհրդի (հետագայում՝ ԵԴԽԽ) ընդունած թիվ 1 կարծիքը դատավորների անկախության և նրանց անփոփոխելիության չափանիշների վերաբերյալ,
- ԵԴԽԽ-ի ընդունած թիվ 6 կարծիքը ողջամիտ ժամկետում արդար դատաքննության վերաբերյալ,
- ԵԴԽԽ-ի ընդունած թիվ 10 կարծիքը հասարակությանը ծառայող Բարձրագույն դատական խորհրդի վերաբերյալ,
- ԵԴԽԽ-ի ընդունած թիվ 11 կարծիքը դատական որոշումների որակի վերաբերյալ,
- Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան (հուլիսի 18, 1998թ.),
- Վենետիկի հանձնաժողովի ընդունած մի շարք կարծիքներ, որոնցից թերևս առավել կարևոր է դատական համակարգի անկախության վերաբերյալ զեկույցը (Մաս I՝ դատավորների անկախություն (մարտի 16, 2010թ.), (CDL-AD (2010) 004):

Միջազգային մակարդակում հարկ է նշել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածը, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածը: Վերջիններս երաշխավորում են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված գրեթե նույն իրավունքները:

Այդ առումով հատկանշական են նաև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ դատական իշխանության անկախության վերաբերյալ

1985թ. ընդունած բանաձևն, ինչպես նաև դատավորների վարգաքծի վերաբերյալ Հաագայում ընդունված բանգալորյան սկզբունքները (2002թ.): Այդ փաստաթղթերի վերլուծության արդյունքում կարելի է անել հետևյալ դիտարկումները.

1) դրանք երաշխավորում են միայն հիմնական սկզբունքներ՝ նվազագույն չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվեն բոլոր պետությունները,

2) պետությանը հաճախ հնարավորություն են տալիս ընտրություն կատարել միջազգային չափանիշներին համապատասխանող մի քանի հնարավոր լուծումների միջև,

3) հաճախ կարող է տպավորություն ստեղծվել, որ դրանցում ներառված որոշ առաջարկություններ գլխավորապես վերաբերում են այսպես կոչված «նոր ժողովրդավարություններին», որոնք դեռևս չեն ձևավորել ժողովրդավարական ավանդույթներ և ինստիտուտներ:

Դատական իշխանության անկախությունը և անկողմնակալությունը

Դատական իշխանության անկախությունն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ չափում: Օբյեկտիվ իմաստով դատական իշխանության անկախությունը դատական համակարգի անփոխարինելի բաղկացուցիչ է: Սուբյեկտիվ իմաստով անկախությունը վերաբերում է յուրաքանչյուր անհատի՝ անկախ դատավորի կողմից սեփական իրավունքների պաշտպանության, իրավունքին: Արդարադատության արդյունավետ իրականացումն անհնար է առանց անկախ դատավորների: Միայն վերջիններս կարող են ուղղակիորեն ապահովել քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանություն:

Դատավորների անկախությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Ինստիտուցիոնալ տարրերից զատ կարևոր դեր են խաղում նաև դատավորների անձնական և մասնագիտական որակները: Ինստիտուցիոնալ գործոնների տեսանկյունից պետությունները պետք է ընդունեն այնպիսի օրենքներ, որոնք հնարավորություն կտան ընտրել առավել բարձր որակավորում ունեցող իրավաբանների՝ դատական գործունեության իրականացման համար: Անհրաժեշտ է սահմանել նաև այնպիսի շրջանակներ, որոնք թույլ

կտան դատավորներին ծավալել իրենց գործունեությունն՝ առանց ենթարկվելու արտաքին ազդեցությունների: Վերոնշյալ փաստաթղթերը, որպես կանոն, տարբերակում են դատավորներին *արտաքին* ազդեցություններից պաշտպանելու և նրանց *ներքին* անկախությունը երաշխավորելու անհրաժեշտությունը:

Արտաքին անկախություն: Արտաքին անկախությունը պետք է դատավորներին զերծ պահի այլ՝ գործադիր, թե օրենսդիր, պետական մարմնի որևէ ազդեցությունից: Անկախության այդ չափումն իշխանությունների բաժանման սկզբունքի տրամաբանական հետևանք է: Դա հստակ սահմանում է ԵԽ-ի Նախարարների կոմիտեի թիվ 12 հանձնարարականի 11-րդ հոդվածը¹: Հաճախ բարդ է որոշել անբարենպաստ ազդեցության միջավայրը և հաստատել ճիշտ հավասարակշռություն քաղաքական դերակատարների կամ լրատվամիջոցների ճնշումներից դատաքննությունը զերծ պահելու անհրաժեշտության և հասարակության ու անկախ լրատվամիջոցների շրջանում հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրներն ազատ քննարկելու խնդրի միջև²: Դատավորները պետք է ընդունեն, որ իրենք հանրային գործիչներ են³: Դատավորների արտաքին անկախության ապահովման չորս հիմնական տարրերն են

ա) անձեռնմխելիությունը

Դատավորների անձեռնմխելիության սկզբունքը սերտորեն կապված է արտաքին անկախության հետ: Այդ խնդրին անդրադարձել է ԵԴԽ-ն իր թիվ 3 կարծիքում:

Դատավորները կարող են *քրեական* պատասխանատվության ենթարկվել միայն իրենց դատական գործառույթների շրջանակից

¹ ECtHR, *Volkov v. Ukraine*, 9 January 2013.

² Ըստ Վենետիկի հանձնաժողովի, դատական գործընթացը ոչ իրավաչափ ճնշումներից պաշտպանելու նպատակով հարկ է հաշվի առնել *sub judice* սկզբունքը, որն անհրաժեշտ է հստակորեն սահմանել՝ մի կողմից դատական գործընթացի պաշտպանության անհրաժեշտության, մյուս կողմից՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրների բաց քննարկման և մամուլի ազատության միջև համապատասխան հավասարակշռության հաստատման համար (CDL-AD (2010 004, 64-րդ կետ):

³ ԵԴԽ-ի թիվ 1 կարծիք, 63-րդ կետ:

դուրս գործած խախտումների համար: Բացառությամբ որոշ դեպքերի (օրինակ, կոռուպցիա) դատավորները չեն կարող քրեական պատասխանատվության ենթարկվել իրենց գործառնությունների իրականացման ժամանակ թույլ տված սխալների համար⁴: Հավանական դատական սխալների դեմ իրավական պաշտպանության միջոց է վերադաս ատյաններում բողոքարկման արդյունավետ համակարգի ներմուծումը:

Քաղաքացիական պատասխանատվության տեսանկյունից ևս հավանական դատական սխալների, վճռի էության, գործերի վարույթի սահմանված կարգի դեմ իրավական պաշտպանության լավագույն միջոց է բողոքարկումների համապատասխան համակարգը:

Քաղաքացիական արդարադատության թերի իրականացումը, օրինակ, անհարկի ձգձգումները, սկզբունքորեն չպետք է վերագրվի այս կամ այն դատավորին: Դրա համար պատասխանատվություն է կրում պետությունը: Դատավորները կարող են ենթարկվել անհատական պատասխանատվության միայն խիստ բացառիկ դեպքերում:

բ) անհամատեղելիության պահանջները

Դատական իշխանության արտաքին անկախության արդյունք է նաև անհամատեղելիության համակարգը: Դատավորները չպետք է հայտնվեն այնպիսի իրավիճակում, որը կասկածի տակ կոնի իրենց անկախությունն ու անկողմնակալությունը: Թերևս այդ պատճառով անհամատեղելիության համակարգն արգելում է դատավորներին ծավալել այլ գործունեություն, բացառությամբ՝ գիտական աշխատանքի:

գ) անկողմնակալությունը

⁴ԵՂԻՄ-ի թիվ 3 կարծիքը սահմանում է. «Դատավորների նկատմամբ չպետք է սահմանվի քրեական պատասխանատվություն իրենց գործառնությունների իրականացման ժամանակ թույլ տված ոչ դիտավորյալ բացթողումների համար» (75-րդ կետ); ըստ Վենետիկի հանձնաժողովի, (CDL-AD (2010)004) «Դատավորները պետք է ունենան գործառնության, սակայն միայն իրական գործառնության անձեռնմխելիություն՝ (քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիություն այն գործողությունների համար, որոնք իրականացվել են դատական գործառնությունների շրջանակում) բացառությամբ միջազգային հանցագործությունների՝ օրինակ կաշառակերության, դեպքերի» (61-րդ կետ):

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է անկախ և անկողմնակալ դատարանի կողմից դատաքննության իրավունքը: «Անկողմնակալություն» հասկացությունը բավական մոտ է «անկախություն» հասկացությանը, ուստի այդ երկու երաշխիքները հաճախ միասին են դիտարկվում:

Եվրոպական դատարանը տարբերակում է *օբյեկտիվ* և *սուբյեկտիվ* անկողմնակալություն: Վերջինս ենթադրում է մեղադրյալի նկատմամբ ցանկացած կանխակալ վերաբերմունքի բացակայություն: Դատավորի անկողմնակալությունը պետք է գնահատվի նաև օբյեկտիվորեն: Այդ առումով առանձնահատուկ կարևոր է անկողմնակալության «տեսանելիությունը»: Եթե գործի հանգամանքները ստեղծում են մեղադրյալի նկատմամբ կանխակալ վերաբերմունքի դրսևորման պատկեր, ապա գործը քննող դատավորն այլևս չի կարող համարվել անկողմնակալ (արդարադատությունը չպետք է միայն իրականացնել, այն պետք է տեսանելի լինի): Օբյեկտիվ իմաստով դատավորների անկողմնակալությունն ապահովելու չափորոշիչներից է նույն դատավորի՝ նույն դատական գործը տարբեր տեսանկյուններից հաջողությամբ քննելու կարողությունը⁵, մինևույն անձի ներգրավվածությամբ մեկ այլ դատական գործի քննումը և այլն:

Անկողմնակալության սկզբունքը սահմանում է մեղադրյալի՝ գործը քննող դատավորից հրաժարվելու իրավունքը և վերջինիս՝ գործի վարույթից հրաժարվելու պարտավորությունը:

դ) Դատավճիռների վերջնական և պարտադիր բնույթը

Դատավորների արտաքին անկախության ևս մեկ բնորոշիչ է վճիռների վերջնական և պարտադիր բնույթը: Դա իհարկե չի բացառում գործի վարույթի վերաբացման հնարավորությունն օրենքով սահմանված դեպքերում, օրինակ, երբ երևան են գալիս գործի նոր հանգամանքներ: Սակայն, Ստրասբուրգի դատարանը չի ընդունում վերահսկվող, վերանայման ենթակա վարույթներն այն տեսքով⁶, որով դրանք գոյություն ունենին հետխորհրդային պետություններում, (1) քանի որ դրանք կասկածի տակ էին առնում արդեն ուժի մեջ մտած և *res*

⁵ ECtHR, *De Cubber v. Belgium*, 14 September 1987.

⁶ ECtHR, *Irina Fedotova v. Russia*, 19 January 2007.

judicata (դատական ակտի վերջնական լինելու սկզբունք) կարգավիճակ ստացած վճիռները, և (2) քանի որ դրանք իրականացվում էին բողոքարկման սահմանված ժամկետի շրջանակներից դուրս:

Ինչպես իրավափոփոխում նշում է Վենետիկի հանձնաժողովը, դատական որոշումները ենթակա չեն վերանայման բողոքարկման գործընթացից դուրս, մասնավորապես՝ բողոքարկման սահմանված ժամկետից հետո դատախազի կամ ցանկացած այլ պետական մարմնի բողոքարկման ճանապարհով⁷:

Ներքին անկախություն: Դատական իշխանության ներքին անկախությունը հետազոտողների ուշադրությանն այնքան չի արժանացել, որքան արտաքինը, սակայն այն պակաս կարևոր չէ: Նախարարների կոմիտեի թիվ 12 հանձնարարականի (2010) 22-րդ կետը հստակ սահմանում է ներքին անկախության սկզբունքը: Այն ամրագրում է, որ դատական գործունեությունն իրականացնելիս դատավորները ստորադաս չեն դատարանի նախագահին կամ այլ վերադաս ատյանի⁸:

Յուրաքանչյուր դատավոր, անկախ դատարանում զբաղեցրած իր դիրքից, իր պարտականություններն իրականացնում է պետության անունից և պատասխանատու է բացառապես օրենքի առջև: Դատավորները ենթակա են միայն օրենքին: Վճիռների կայացման ժամանակ դատավորը չպետք է ստանա որևէ ցուցում նույնիսկ այն դատարանից, որտեղ ընթանում է գործի քննությունը⁹:

⁷ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2010)004, 67-րդ կետ:

⁸ Ըստ Վենետիկի հանձնաժողովի, բարձրագույն ատյանի դատարանին՝ ստորին ատյանի դատարանների գործունեությունը վերահսկելու իշխանության շնորհումը հակասում է վերջիններիս անկախության սկզբունքին: Չնայած բարձրագույն ատյանի դատարանը իրավասու է բեկանել կամ փոփոխել ստորին ատյանի դատարանների կայացրած դատավճիռներն, այդուհանդերձ, այն չպետք է վերահսկողություն սահմանի դրանց նկատմամբ: (CDL-INF (1997) 6, 6-րդ կետ

⁹ Ըստ ԵԴԽ-ի, իր գործառույթների իրականացման ժամանակ դատավորը որևէ մեկին ենթակա չէ: Նա պետական պաշտոնի իրավատերն է, ուստի ծառայում է հանուն օրենքի և պատասխանատու է միայն օրենքի առջև... Դատավորները պետք է ունենան անարգել ազատություն գործերն անկողմնակալ քննելու համար իրենց խղճի թելադրանքով, փաստերի սեփական մեկնաբանությամբ, ինչպես նաև

Ներքին անկախության կարևոր ասպեկտ է միննույն դատարանի տարբեր դատավորներին դատական գործերի քննության հանձնումը: Անհրաժեշտ է խուսափել դատարանի նախագահի՝ դատավարության ելքի վրա ազդելու փորձերից:

Թիվ 12 հանձնարարականը (2010) պահանջում է, որ դատական գործի հանձնումն այս կամ այն դատավորին չթելադրվի կողմերի ցանկությամբ: Ընտրությունը պետք է իրականացվի դատավորների անունների այբբենական կարգով կամ վիճակահանության սկզբունքով:

Այլ կերպ ասած, դատավորները չպետք է ընտրվեն *ad hoc* և/կամ *ad personam* սկզբունքով, այլ՝ թափանցիկ չափորոշիչների հիման վրա: Գործի քննությունը դատավորին հանձնելուց հետո այն այլևս նրա վարույթից չի կարելի ետ վերցնել, բացառությամբ որոշ առանձնահատուկ դեպքերի, օրինակ՝ դատավորի հիվանդության դեպքում: Դատավորին փոխարինելու ընթացակարգը պետք է սահմանվի օրենքով և առաջնորդվի օբյեկտիվ չափորոշիչներով¹⁰:

Սահմանելով յուրաքանչյուր անհատի՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից դատաքննության, իրավունքը, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածն անուղղակիորեն սահմանում է, որ դատական իշխանության կազմակերպումը չի կարելի թողնել բացառապես դատական իշխանության հայեցողությանը¹¹:

Դատավորների նշանակման համար իրավասու մարմիններ

Վերոնշյալ փաստաթղթերի մեծ մասը սահմանում է, որ դատավորների նշանակման և նրանց ծառայողական առաջխաղացմանը վերաբերող որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափորոշիչների՝ նրանց որակների, արդյունավետ աշխատանքի և ազնվության վրա¹²: Դատավորի արժանիքները չպետք է չափվեն

հիմնարար նորմերին համապատասխան (թիվ 1 կարծիք, 64-րդ և 66-րդ կետեր):

¹⁰ ECtHR, *Koudeschkina v. Russia*, 26 February 2009.

¹¹ ECtHR, *Coëme and others v. Belgium*, 22 June 2000.

¹² ԵՂԽԽ-ի թիվ 1 կարծիքում նշվում է, որ նշանակումների և ծառայողական առաջխաղացումների մասին խորհրդատվության և դրանց իրականացման համար պատասխանատու անդամ երկրների

բացառապես իրավական գիտելիքներով կամ վերլուծական կարողություններով: Հարկ է հաշվի առնել նաև դատավորի՝ վճիռ կայացնելու ունակությունը:

Նախարարների կոմիտեի թիվ 12 հանձնարարականը (2010) նախապատվություն է տալիս դատավորների նշանակման մասնագիտացված մարմնին՝ ինչպիսին է Բարձրագույն դատական խորհուրդը՝ միևնույն ժամանակ ընդունելով այլ համակարգերի գործարկման հնարավորությունը: Փաստաթղթում հատկապես կարևորվում է դատավորների նշանակման և առաջխաղացման համար իրավասու մարմնի՝ կառավարությունից և խորհրդարանից անկախ գործելու, հնարավորությունը:

Այդ անկախության ապահովման համար հրամայական է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամների առնվազն մի մասը նշանակվի դատական իշխանության կողմից և Խորհուրդն օժտված լինի ընթացակարգի սեփական կանոններ սահմանելու իրավասությամբ:

ԵԴԽԽ-ը իր թիվ 10 կարծիքում նախապատվություն է տալիս դատավորներից և այլ իրավաբաններից (փաստաբաններ, իրավագիտության պրոֆեսորներ) կազմված խառը մարմնի ստեղծմանը, ինչը հնարավորություն կտա հաշվի առնել նաև իրավաբանների այլ շերտերի դիրքորոշումները¹³:

Վենետիկի հանձնաժողովը 2010թ. իր զեկույցում ևս նշում է Բարձրագույն դատական խորհրդի խառը կազմի անհրաժեշտության

իշխանությունները պետք է ներկայացնեն, հրատարակեն և գործողության մեջ դնեն օբյեկտիվ չափորոշիչներ՝ ապահովելու, որ դատավորների ընտրությունը և նրանց հետագա կարիերան հիմնված լինեն արժանիքների, մասնավորապես՝ որակների, ազնվության, կարողությունների և աշխատանքի արդյունավետության, վրա (25-րդ կետ):

¹³Բարձրագույն դատական խորհուրդը կարող է կազմված լինել բացառապես դատավորներից կամ ունենալ խառը կազմ: Երկու դեպքում էլ հարկ է խուսափել շահադիտական, ինքնապաշտպանական և այլընտրանքային ճանապարհով նշանակման դրսևորումներից (16-րդ կետ): Խառը կազմի առավելություններից է հասարակության շրջանում տարբեր դիրքորոշումների ներկայացման հնարավորությունը՝ այդպիսով դատական իշխանության համար ապահովելով օրինականության հավելյալ հիմքեր (19-րդ կետ):

մասին և պնդում է, որ դրա անդամների զգալի մասը պետք է նշանակվի դատավորների կազմից և որ վերջիններս պետք է ընտրվեն իրենց իրավահավասարների կողմից:

Միաժամանակ Վենետիկի հանձնաժողովը փաստում է, որ Եվրոպայում համագոյակցում են տարբեր համակարգեր: Հին ժողովրդավարություններում գործադիր իշխանությունը երբեմն վճռորոշ ազդեցություն է ունենում դատավորների նշանակման գործում: Այդ երկրներում նշանակման ընթացակարգերը պետք է լինեն թափանցիկ և որոշումը պետք է կայացվի բացառապես օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա: Այդ համակարգերը կարող են գոհացուցիչ արդյունքներ ապահովել, քանզի գործադիր իշխանության ազդեցությունը մասամբ փոխհատուցվում է հին դատական մշակույթի առկայությամբ: Նոր ժողովրդավարություններում, որոնցում դեռևս չեն ձևավորվել դատական մշակույթ և ավանդույթ, անհրաժեշտ է անկախ մարմնի՝ օրինակ Բարձրագույն դատական խորհրդի, կողմից վերահսկողության սահմանում:

Խորհրդարանի կողմից դատավորների ընտրությունը չի խրախուսվում, քանզի այդ դեպքում կարող է առաջանալ քաղաքական նկատառումների գերակայության վտանգ: Ըստ Վենետիկի հանձնաժողովի, ոչ սահմանադրական դատարանի դատավորների նշանակումները խորհրդարանի քվեարկությանը դնելու համապատասխան առարկա չեն, քանզի այդ դեպքում չի կարելի բացառել քաղաքական նկատառումների՝ թեկնածուի օբյեկտիվ արժանիքների վրա գերիշխելու վտանգը¹⁴: Ուստի, կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ փաստաթղթերի զգալի մասը նախապատվություն է տալիս Բարձրագույն դատական խորհրդի խառը կազմին, իսկ թիվ 12 հանձնարարականը (2010) հավելում է, որ դատավորները պետք է այլ իրավական ոլորտի մասնագետների նկատմամբ ունենան թվային գերակշռություն կամ առնվազն լինեն հավասար թվով:

¹⁴ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2007)028, 47-րդ կետ:

Մանդատի տևողությունը և դատավորների անփոփոխելիությունը

Թիվ 12 հանձնարարականը (2010) սահմանում է դատավորների՝ (անկախ նրանից՝ ինչ ճանապարհով են նշանակվել) իրենց պաշտոնը զբաղեցնելու իրավունքը՝ նախքան պաշտոնավարման ժամկետի ավարտը կամ թոշակի անցնելը (49-րդ կետ): Այն նաև առաջարկում է, որ դատավորները ծավալեն անժամկետ գործունեություն: Ըստ ԵԴԽԽ-ի, այդ մոտեցումը պակաս խնդրահարույց է անկախության տեսանկյունից¹⁵:

Դատավորների կարգավիճակի վերաբերյալ եվրոպական խարտիան, ինչպես նաև ԵԴԽԽ-ի թիվ 1 կարծիքն առաջարկում են, որ դատավորների ժամանակավոր կամ պայմանական նշանակման վերափոխումն անժամկետ պաշտոնի իրականացվի թափանցիկ և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա:

Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել ոչ հստակ մանդատներից, քանզի դրանք կարող են վտանգել դատավորների անկախությունը: Ըստ Վենետիկի հանձնաժողովի, փորձաշրջանի սահմանումը կարող է խոչընդոտել դատավորների անկախությանը, քանզի նրանք կարող են իրենց ճնշված զգալ այս կամ այն վճռի կայացման ժամանակ¹⁶:

Այդուհանդերձ, Վենետիկի հանձնաժողովը նաև ընդունում է, որ որոշ երկրներում փորձաշրջանի սահմանումն անհրաժեշտ է՝ համոզվելու համար, որ դատավորն օժտված է անհրաժեշտ որակավորումներով: Այդ դեպքում թեկնածուին դատավորի պաշտոնում հաստատելու մերժումը պետք է իրականացվի օբյեկտիվ չափորոշիչներով և նույն ընթացակարգային երաշխիքներով, որոնք կիրառվում են դատավորին՝ իր պաշտոնից հեռացնելու ժամանակ¹⁷: Վենետիկի հանձնաժողովը նաև հավելում է, որ չնայած գնահատման համակարգի միջոցով բարձր չափանիշներ ապահովելու միտմանը, ակնհայտորեն բարդ է դատավորների անկախությունը համատեղել

¹⁵ ԵԴԽԽ-ի թիվ 1 կարծիք, 48-րդ կետ:

¹⁶ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2007) 028, 40-րդ կետ; Եվրոպական խարտիա, հոդված 3.3:

¹⁷ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2007) 028, 41-րդ կետ:

նրանց գործունեության արդյունքների գնահատման համակարգի հետ: Այդ երկուսից դատական անկախությունն առավել վճռորոշ արժեք է¹⁸:

Թիվ 12 հանձնարարականը երաշխավորում է դատավորների *անփոփոխելիության* սկզբունքը: Ըստ ԵԴԽԽ-ի, այդ սկզբունքը բնորոշ է իրական անկախությանը: Ուստի, այն պետք է լինի անկախության հստակ տարր՝ ամրագրված բարձրագույն ներպետական մակարդակով¹⁹:

Անփոփոխելիության սկզբունքը սահմանում է, որ դատավորը չի կարող տեղափոխվել մեկ այլ դատարան առանց իր համաձայնության: Ըստ Եվրոպական խարտիայի, դատարանում պաշտոն զբաղեցնող դատավորը սկզբունքորեն չի կարող նշանակվել մեկ այլ դատական պաշտոնի կամ գրանցվել մեկ այլ համակարգում, նույնիսկ պաշտոնի առաջխաղացման ճանապարհով՝ առանց ազատ կամարտահայտման²⁰:

Այդ հիմնարար սկզբունքից կարող են լինել միայն սահմանափակ թվով շեղումներ, օրինակ, գերծանրաբեռնված դատարանների ժամանակավոր թեթևացումը:

Կարգապահական միջոցները կարող են սահմանել Բարձրագույն դատական խորհուրդը կամ կարգապահական տրիբունալը: Դատավորի դեմ կիրառվող ցանկացած կարգապահական միջոց ենթակա է բողոքարկման: Ըստ ԵԴԽԽ-ի, անկախ մարմնի միջամտությունը՝ պաշտպանության լիարժեք իրավունքների երաշխավորման ընթացակարգի ճանապարհով, առանձնահատուկ նշանակություն ունի կարգապահական հարցերում²¹:

Դատավորների վարձատրությունը

Գրեթե բոլոր վերոնշյալ փաստաթղթերն անդրադառնում են դատավորների վարձատրությանը, որը պետք է համապատասխանի իրենց կատարած աշխատանքի կարևորությանը: Ցանկացած դեպքում

¹⁸ Նույն տեղում, 44-րդ կետ:

¹⁹ ԵԴԽԽ, թիվ 1 կարծիք, 60-րդ կետ:

²⁰ Եվրոպական խարտիա, հոդված 3.4:

²¹ ԵԴԽԽ, թիվ 1 կարծիք, 60-րդ կետ; Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2007)028, 49-րդ կետ:

այն պետք է բավարար լինի դատավորին արտաքին ազդեցությունից պաշտպանելու համար: Ըստ ԵԴԽԽ-ի, հատկապես նոր ժողովրդավարությունների դեպքում կարևոր է սահմանել հատուկ իրավական դրույթներ, որոնք կերաշխավորեն դատական համակարգի աշխատողների աշխատավարձերի կայունությունը կրճատումների ժամանակ և առնվազն դե ֆակտո կապահովեն կենսամակարդակի և աշխատավարձերի համամասնություն²²: Թոշակի անցած դատավորներին պետք է տրամադրվի համապատասխան կենսաթոշակ:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի, դատավորների աշխատավարձերը չպետք է գնահատվեն իրենց կատարած աշխատանքների ծավալի հիման վրա և չպետք է տրամադրվեն հավելավճարներ²³:

Դատական համակարգին հատկացված բյուջեն պետք է բավարար լինի ապահովելու դատարանների իրական անկախությունը: Ըստ Վենետիկի հանձնաժողովի, դատարաններին անհրաժեշտ է ապահովել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված չափանիշներին համապատասխան գործելու և իրենց պարտականություններն ազնվորեն և արդյունավետ իրականացնելու բավարար ռեսուրսներով, ինչն անհրաժեշտ է արդարադատության և օրենքի գերակայության նկատմամբ հանրային վստահության ամրապնդման համար²⁴:

Դատական իշխանության կարծիքը պետք է հաշվի առնվի խորհրդարանի կողմից պետական բյուջեի հաստատման ժամանակ: Ըստ ԵԴԽԽ-ի, չնայած նրան, որ դատարանների ֆինանսավորումը խորհրդարանի հաստատմանը ներկայացվող պետական բյուջեի մաս է, այն չպետք է ենթարկվի քաղաքական վայրիվերումների: Չնայած ֆինանսավորման մակարդակը, որը երկիրը կարող է տրամադրել իր դատարաններին, քաղաքական որոշման արդյունք է, այդուհանդերձ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված համակարգի գործարկմանը՝ ապահովելու, որ ո՛չ գործադիր, ո՛չ օրենսդիր իշխանությունը որևէ ճնշում չգործադրի

²² ԵԴԽԽ, թիվ 1 կարծիք, 62-րդ կետ:

²³ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2010) 004, 46-րդ կետ:

²⁴ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2010) 004:

դատական իշխանության վրա բյուջեի հաստատման ժամանակ: Դատարաններին ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն դատական համակարգի անկախության նկատմամբ խստագույն հարգանքով²⁵:

The International Principles Governing a Good Administration of Justice

Giorgio MALINVERNI
University of Geneva, Switzerland

The formation and consolidation of judicial system is one of the most complicated and core issues facing post-Soviet transformation states. It is the last instance where the decisions of the state authorities can be appealed ensuring the protection of human rights and liberties and the trust in state authorities. The independence and impartiality of the judges as well as the insurance of their remuneration constitute the basis of good administration of justice. In post-Soviet transformation states the main obstacles to this are the legacy of judicial system based on other principles, the lack of appropriate culture and traditions.

²⁵ ԵՂԽԽ, թիվ 2 կարծիք, 5-րդ կետ: